ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
քաղաք Մարալիկ, Մադաթյան փ., հեռ.0242-2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 505-Ա
«11» հունիսի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԱՎԱՐՏԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՀԱՐԿԱԴԻՐ ՊԱՐԱՊՈՒՐԴ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 46-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենքգրքի 186-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով N ՀՀ ՇՄ-ՀԲՄԱՇՁԲ-25/03-2-1 համաձայնագիրը՝ մանկապարտեզի շինարարական վերանորոգման աշխատանքների ավարտման համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու նպատակով՝

որոշում եմ '

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի «Սառնաղբյուրի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեության դադարեցումը երկարացնել ևս 106 օր տևողությամբ 2026 թվականի հունիսի 11-ից:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի «Սառնաղբյուրի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության սաներին ազատել ամսական վարձավճարի վճարումից:

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի «Սառնաղբյուրի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցներին 2026 թվականի հունիսի 11-ից համարել հարկադիր պարապուրդում մինչև աշխատանքների ավարտը՝ վճարելով մինչև

պարապուրդը հաստիքացուցակով սահմանված և տարիֆիկացիայով հաստատված դրույքաչափի երկու երրորդի չափով:

5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի «Սառնաղբյուրի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Եստեր Արշակյանին և հաշվապահ՝ Վանուհի Դավթյանին համարել աշխատանքի մեջ՝ վճարելով ըստ հաստատված հաստիքացուցակի և տարիֆիկացիայի:

6. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«11» հունիսի 2026 թվական
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
քաղաք Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 506-Ա

«12» հունիսի 2026 թվականի քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-Ի N 285-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի N-51 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի քաղաքային և գյուղական համայնքների սեփականության գույքի ցանկի» 7-րդ հավելվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ հաստատված «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգի» 2-րդ, 3-րդ կետերի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Բագրավան բնակավայրի, 4-րդ փողոց, թիվ 3-րդ հասցեում գտնվող՝ բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-022-0009-0005 կադաստրային ծակագրով 0,13188 հեկտար մակերեսով հողամասի և նրանում առկա շինությունների նկատմամբ Անի համայնքի սեփականության իրավունքը պետական գրանցման ենթարկելու անհրաժեշտությունը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման

գործառնական նշանակության 08-022-0009-0005 կադաստրային ծակագրով 0,13188 հեկտար մակերեսով հողամասում /հասցեն՝ մարզ Շիրակ, Անի համայնք, բագրավան բնակավայր, 4-րդ փողոց, թիվ 3-րդ / առկա մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված շինությունները ճանաչել օրինական, այն համարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթարկել պետական գրանցման:

2. Օրինական ճանաչված և համայնքի սեփականություն համարված սույն որոշման 1-ին կետում նշված շինությունների և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասի՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի նախագահի հրամանով հաստատված ձևին համապատասխան կազմված հատակագծերը և շինության բնութագիրը կցվում են սույն որոշմանը:

3. Նշել, որ օրինական ճանաչված հողամասը՝ ա) չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում, բ) չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, գ) կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, այն կառուցված է քաղաքաշինական նորմերի ու կանոններին համապատասխան և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Հողամասում առկա են 2001 թվականի մայիսի 15-ից հետո կառուցված շինություններ,որոնք օրենքով սահմանված կարգով կադաստրի կոմիտեում հաշվառված չեն որպես ինքնակամ կառույցներ,ուստի անհրաժեշտ է շինությունները թողնել ինքնակամ, անշարժ գույքի նկատմաբ Անի համայնքի սեփականության իրավունքը ենթարկել պետական գրանցման և տրամադրել սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական:

5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2026 թվականի ապրիլի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի անի համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը և նրանում առկա շինությունները օրինական ճանաչելու այն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը համարելու մասին» N 285-Ա որոշումը:

6. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա.ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«12» հունիսի 2026 թվականի

քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, հեռ. 0242- 2-22-37

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 507-Ա

«12» հունիսի 2026 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԶԻԿ՝ ՄԻՀՐԱՆ ԱՐՄԵՆԱԿԻ ԹԱԹՈՅԱՆԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի ապրիլի 5-ի N 35-Ա որոշումը Միհրան Թաթոյանին դրամական խրախուսում տրամադրելու վերաբերյալ.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրի բնակիչ՝ Արմենակ Միհրանի Թաթոյանին Անի համայնքի 2026 թվականի բյուջեի Գործառնական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 /Սոցիալական հատուկ արտոնություններ /այլ դասերին չպատկանող/ և տնտեսագիտական դասակարգման 4727 հոդվածից/ կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից /տրամադրել 100000 /մեկ հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ միանվագ դրամական խրախուսում:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«12» հունիսի 2026 թվական

Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
քաղաք Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 508-Ա

«15» հունիսի 2026 թվականի քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՓՈՍԱՅԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդված 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-ին ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 7-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության,12-րդ կետի 1-ին ենթակետի և 20-րդ կետի 1-ին ենթակետի, ինչպես նաև 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության և 20-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կարիքների համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի 2026 թվականի բյուջեից նախատեսվող միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագրերով՝ /ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)/՝ 45231177 գնանշման հարցման միջոցով՝ ճանապարհների վերանորոգման աշխատանքների /Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում իրականացվելիք փոսային նորոգման աշխատանքներ/ ձեռքբերման նպատակով ձևավորել պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով.

Զորիկ Խաչատրյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի տեղակալ – ղեկավար

Վաչագան Հեպոյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժնի պետ - անդամ

Պատվական Սարգսյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժնի երկրորդ կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար – անդամ

2. Վերը նշված աշխատանքների ձեռքբերման նպատակով գնումների համակարգողի լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Սաթենիկ Զաքարյանին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա.ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«15» հունիսի 2026 թվականի

քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Անի համայնք,
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-16-58, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 509-Ա

<<16>> հունիսի 2026 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԱՆՋԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐ, 3-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 14-ՐԴ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ՍՈՍ ՀՈՎՍԵՓԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ <<03>> ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ N 21 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՇԻՆԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԱՎԱՐՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի <<ժ>> ենթակետի, 28-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգի» 125-րդ կետի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 1541-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի աշխատանքային խմբի կողմից քաղաքացիներ՝ Սոս Հովսեփի Հովսեփյանի կողմից /հետագայում՝ կառուցապատող/ Հյաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լանջիկ բնակավայր, 3-րդ փողոց, թիվ 14-րդ հասցեում բնակելի տան կառուցման համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի կողմից տրամադրված <<03>> դեկտեմբերի 2016 թվականի N 21 շինարարության թույլտվության և <<15>> ապրիլի 2024 թվականի N 346-Ա որոշմամբ երկարաձգված շինարարության թույլտվության սահմանված ժամկետում շինարարությունը չավարտելու փաստի

հիմքով քաղաքացի՝ Սոս Հովսեփի Հովսեփյանի կողմից Վարչական իրավախախտում թույլ տալու վերաբերյալ կազմված 2026 թվականի հունիսի 16-ի արձանագրությունը և կառուցապատողի 2026 թվականի հունիսի 04-ի դիմումը՝ կառուցապատվող օբյեկտի նախահաշվային արժեքի վերաբերյալ.

որոշում եմ՝

1. Կառուցապատումը համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում շինարարությունը չավարտելու համար քաղաքացի Սոս Հովսեփի Հովսեփյանի նկատմամբ նշանակել 90 000 (ինսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տուգանք, որը ենթակա է մուծման Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի բյուջեի 900495101124 հաշվարկային հաշվին՝ 15 օրվա ընթացքում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կառուցապատողին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<16>> հունիսի 2026 թվական
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 510-Ա

«16» հունիսի 2026 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՓՈՍԱՅԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդված 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 7-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության, 8-րդ կետի 3-րդ ենթակետի և 11-րդ կետի 4-րդ ենթակետի դրութներով.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կարիքների համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի 2026 թվականի բյուջեից նախատեսվող միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագրերով՝ /ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)/՝ 45231177 գնանշման հարցման միջոցով՝ ճանապարհների վերանորոգման աշխատանքների /ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքում իրականացվելիք փոսային նորոգման աշխատանքներ/ ձեռքբերման նպատակով գնումների կազմակերպման համար սահմանել գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝ Հարություն Համբարյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի Քարտուղար (նախագահ) Գևորգ Շաբոյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի խորհրդական /անդամ/ Լուսինե Գրիգորյան Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական

տեխնոլոգիաների բաժնի պետ /անդամ/ Գագիկ Պողոսյան Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար:

2. ՇՄԱՆՀ-ԳՀԱՇՁԲ-26/2 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Սաթենիկ Զաքարյանին: Սահմանել, որ ՇՄԱՆՀ-ԳՀԱՇՁԲ-26/2 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի առաջին նիստը հրավիրել 2026 թվականի հունիսի 15-ին, ժամը 16:00-ին, ՀՀ Շիրակի մարզ, Անի համայնքապետարան ք. Մարալիկ, Մադաթյան 1 հասցեում:

3. Գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ հանձնաժողովի գործունեությունը կազմակերպել գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանն և այլ իրավական ակտերին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«16» հունիսի 2026 թվական
քաղաք Մարալիկ